# ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԱՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
## (XIII դարի երկրորդ կես)

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ուսումնասիրության մեջ առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում նրա արտաքին քաղաքականության և դիվանագիտության պատմության ուսումնասիրությունը: Հայկական թագավորության համար XIII դարը հարուստ էր մի շարք քաղաքական իրադարձություններով, և բնական է, որ հայ դիվանագետները պետք է մտքի մեծ ճկունություն և խելամտություն ցուցաբերեին տարածաշրջանի քաղաքական, դիվանագիտական և տնտեսական մարտահրավերներին դիմագրավելու համար:*

*Ինքնին հետաքրքիր է, թե տվյալ ժամանակաշրջանում ինչպիսի վիճակ էր տիրում այդ տարածաշրջանում: Հայտնի է, որ դեռևս 1250 թ. Եգիպտոսում իշխանության գլուխ անցան մամլուքները, որոնք կարճ ժամանակ անց դարձան Կիլիկյան Հայաստանի ոխերիմ թշնամիները[1]: Մյուս կողմից՝ 1254 թ. Կիլիկիայի հայոց արքա Հեթումը ուղևորվեց Մոնղոլիա և պայմանագիր կնքեց Մանգու մեծ խանի հետ: Այդ պայմանագիրը տվյալ պահին շահավետ էր երկու կողմերին: 1256 թ. Իրանի և Անդրկովկասի տարածքում ստեղծվեց մոնղոլական իլխանությունը[2], որը սկսեց սերտորեն հարաբերվել Կիլիկիայի հայկական թագավորության հետ: Ի հակադրություն սրա՝ Մերձավոր Արևելքում դեռևս - բավականին ուժ էր ներկայացնում Իկոնիայի սուլթանությունը, որը ոչ վաղ անցյալում արդեն հասցրել էր զգալի ճնշում գործադրել հայկա-*

---

[1] A. D. S t e w a r t. The Armenian Kingdom and the Mamluks, War and Diplomacy during the Reigns of Hetum II ( 1289–1307), Brill, 2001, pp. 37–38; *Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250–1375 թթ., Երևան, 2008, էջ 27,* M. C a n a r d. Le Royaumed`Armenie-Cilicie et les Mamelouks Jusju au traite de 1285.– Revue des Etudes Armeniennes, t. IV. Paris, 1967, pp. 217–259; С. Х о т к о. Черкесские (Адыгские) правители Египта и Сирии в XIII–XVIII веках. Майкоп, 1995, с. 88, D. A y a l o n. Studies on the Mamluks of Egypt ( 1250–1517). London, 1977, pp. 20–53.

[2] Cambridge History of Iran, Cambridge, 1968, pp. 342–344; Encyclopaedia Iranica, Vol. V, California, 1987, p. 135; B. S p u l e r. The Muslim World, part II, Leiden, Brill, 1960, pp. 25–26.

*կան թագավորության վրա: Դրանց զուգահեռ՝ իրենց գործունեությունը շարունակում էին նաև Արևելքում ստեղծված խաչակրաց իշխանությունները: Բացի այդ, դեռևս չէին մարել խաչակրաց արշավանքներ կազմակերպելու հույսերը: Քաղաքական այդպիսի պայմաններում պատմական ասպարեզ է իջնում Կարամանյան պետությունը, որը բավական կարճ ժամանակաշրջանում դառնում է Կիլիկիայի հայկական թագավորության թշնամին: Ցավոք, մինչև այժմ եղած գիտական աղբյուրների, ուսումնասիրությունների ու գրականության մեջ շատ քիչ տեղեկություններ կան այս պետության ստեղծման և նրա գործունեության առաջին փուլի մասին: Ինչ վերաբերում է Կիլիկյան Հայաստանի և Կարամանյան պետության հարաբերություններին, ապա այս հարցը հայագիտության մեջ ընդհանրապես բաց է մնացել, քանի որ երկկողմ հարաբերությունների պատմության մասին լռում են միջնադարյան հայ և օտար սկզբնաղբյուրների ճնշող մեծամասնությունը: Դեռ ավելին, Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության և, մասնավորապես, Կարամանյան պետության հետ հարաբերությունների մասին գրեթե ոչինչ չի ասվել նաև ժամանակակից գիտական գրականության մեջ. խոսքը վերաբերում է թե՛ հայ և թե՛ օտարազգի գիտնականներին:*

*Այժմ տեսնենք, թե ինչպիսի հաղորդումներ կան այս պետության ստեղծման վերաբերյալ: Ինչպես հայտնի է, 1243 թ. Քյոսեդաղի Չմանկատուկ գյուղաքաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո, երբ Իկոնիայի սուլթանության զորքերը պարտվեցին մոնղոլական զորքերին, թուրքմեն-կարամանները, որոնք մինչ այդ Իկոնիայի սուլթանության մասն էին կազմում, 1256 թ. ապստամբեցին նրանց դեմ և հիմնեցին իրենց պետությունը Արևմտյան Կիլիկիայի լեռնային շրջաններում[3]: Մասնավորապես, հայտնի թուրքագետ Վ. Գորդլևսկին կարծիք է հայտնում, որ կարամանների իշխանության հիմնադիրը եղել է իսլամ ընդունած մի հայ[4]: Վ. Գորդլևսկին ոչինչ չի ասում այն մասին, թե ով էր այդ հայը և ինչպես էր նա հասել այնտեղ: Պատմիչ Սմբատ Սպարապետը, ով անդրադարձել է նշյալ ժամանակաշրջանում Կարամանյան զորքերի արշավանքներին, չի նշում նրանց հիմնադրի հայ լինելու հանգամանքը[5]: Վերը նշված խնդրի մասին մի փոքր ավել խոսում է Ջ.*

---

[3] В. Гордлевский. Государство Сельджукидов Малой Азии. М.–Л., 1941, с. 37, The Encyclopaedia of Islam, Vol. II. London, 1960, p. 643; B. Spuler. The Muslim World, part II, p. 27, The Cambridge History of Iran, Vol. V. Cambridge, 1968, p. 338; К. Босворт. Мусульманские династии. М., 1971, с. 183–184; *Ա. Օրեշկովա, Մ. Հասրաթյան, Կ. Պետրոսյան. Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986, էջ 21,* M. A. Buzkuz. Turkiye Selcullari Doneminde Karamanlilar. Ankara, 2008, p. 18.

[4] В. Гордлевский. *Նշվ. աշխ., էջ 37:*

[5] *Սմբատ Սպարապետ. Պատմութիւն, Մոսկվա, 1856, էջ 238–239:*

*Համմերը, ըստ որի՝ Իկոնիայի սուլթանը՝ Ալա էդ-դինը, 1228 թ. գրավելով Էրմենեկը, այն հանձնում է իր զորավարներից մեկին, որն էլ բնակեցնում է այնտեղ թուրքմենական ցեղեր[6]: Նրանց մեջ կար Նուր-Սուֆի անունով մի ածխագործ, որը, ըստ հեղինակի, հայ էր: Սա շատ անգամ Լարանդա էր գնում իր ածուխը վաճառելու և այս առևտրի շնորհիվ շատ հարստացել էր: Նա ուներ երկու որդի, որոնց Կարաման կոչեցին իրենց տոհմի անունով[7]: Դժբախտաբար, հեղինակը չի մատնանշում այն աղբյուրը, որից օգտվել է: Այս անձնավորության հայ լինելու մասին է խոսում նաև մեծ հայագետ Ղևոնդ Ալիշանը. «Ոչ չգիտեմ յորոց պատմչաց տեղեկացեալ՝ ասէ ազգաւ Հայ լինել…»[8]: Հետազոտող Ս. Տեր-Ներսիսյանը խոսում է կարամանների թուրքմենական հարստության հիմնադիր Կարաման Իբն-Նուրա-Սուֆիի (1256–1261 թթ.)[9] մասին, սակայն նրա ազգային պատկանելիության մասին ոչինչ չի նշում: Կարամանյան պետության հիմնադրման և առաջնորդի մասին դիտարկումներ է անում նաև հայտնի արևելագետ Կ. Բոսվորտը, համաձայն որի՝ կարամանյանները ծագել են թուրքմենական Աֆշար ցեղից, իսկ Կարամանի հայրը եղել է հայտնի շեյխ[10]: Կարամանների թուրքմենական ցեղախմբին պատկանելու վերաբերյալ մեզ տեղեկություն է հայտնում նաև Հ. Մ. Հովհաննիսյանը իր հետազոտության մեջ[11], սակայն սահմանափակվում է վերոնշյալով: Շատ կարևոր է նաև նշել, որ թուրքմեն-կարամանները պայքար սկսեցին Փոքր Ասիայում իրանական ազդեցության դեմ: Ըստ Վ. Բայբուրդյանի՝ ամենայն հավանականությամբ, նրանք ունեին շուրջ 50 հազարանոց բանակ[12]: Այդ պետության առաջնորդներից մեկը՝ Մեհմեդ բեյը (1261–1277), իր պետության մեջ գրագրության և պետական լեզու է դարձնում թուրքերենը, թեև մինչ այդ սելջուկյանները պարսկերենին էին այդ կարգավիճակը տվել[13]:*

*Այսպիսով, պետք է փաստել, որ 1256 թ. Կիլիկիայի արևմտյան հարևանությամբ ստեղծվում է թուրքմեն-կարամանների պետությունը: Ճիշտ է, ամենայն հավանականությամբ, մինչև 1307 թ. նրանք ձևականորեն ընդունում էին Իկոնիայի սուլթանության գերիշխանությունը,*

---

[6] J. DE H a m m e r. Histoire de I` Empire Ottoman depuis son originejusjuanosjours, t. III. Paris, 1835–1841, p. 85.

[7] *Նույն տեղում:*

[8] *Ղ. Ա լ ի շ ա ն. Միսուան, Վենետիկ, 1885, էջ 293:*

[9] *Տե՛ս Լ. Տ ե ր - Պ ե տ ր ո ս յ ա ն. Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան, 2005, էջ 405:*

[10] Կ. Բ ո ս վ ո ր տ. *Նշվ. աշխ., էջ 183–184:*

[11] *Հ. Մ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայկական Կիլիկիո բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ-Ս.Ղազար, 1989, էջ 185:*

[12] *Վ. Բ ա յ բ ո ւ ր դ յ ա ն. Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 37:*

[13] *Նույն տեղում:*

*սակայն ներքին և արտաքին քաղաքականության հարցերում միանգամայն անկախ էին: Կարամանյան իշխանությունը աստիճանաբար դառնում է խոշորագույններից մեկը Փոքր Ասիայում՝ վերածվելով մեծ վտանգի տարածաշրջանի շատ երկրների, այդ թվում և Կիլիկիայի հայկական թագավորության համար: Այդ մասին է խոսում նաև Կ. Բոսվորտը, ըստ որի՝ կարամաններըեղել են ամենաուժեղ և հարատև դինաստիան Անատոլիայում, որոնք մի որոշ ժամանակ հզորացան Օսմանների հետ, բայց հետագայում անկում ապրեցին[14]: Նրանց պետության նախնական կենտրոնը Էրմենեկն էր՝ տեղակայված Տավրոսի հյուսիսային լեռներում: Այնտեղ սկզբնական շրջանում թուրքմեն-կարամանները կառավարում էին որպես սելջուկյան սուլթանի վասալներ, բայց հետագայում հիմնեցին իրենց անկախ պետությունը: XIII դարի երկրորդ կեսերին այս դինաստիան այնքան էր հզորացել, որ նույնիսկ Իկոնիայի սելջուկյան սուլթան Ղլիճ Արսլան Դ-ն էր վախենում նրանցից: Այս է վկայում նաև այն փաստը, որ 1261 թ. Կարաման բեյը հարձակվեց Իկոնիայի սուլթանության մայրաքաղաք Կոնիայի վրա, սակայն մեծ վեզիր Մուիդ ադ-դին Սուլեյմանը ջախջախեց կարամանյան քսան հազարանոց զորքերը Կավաշ ամրոցի մոտ (Կոնիայից հյուսիս): Կարաման բեյը և իր եղբայրը գերվեցին: Դրանից հետո Կարամանյան պետության նոր տիրակալ դարձավ Մուհամմեդ Ա-ն, որը թաքնվել էր հաղթողներից դժվարամատչելի լեռնային տարածքներում[15]: Նման պայմաններում հայկական թագավորությունը պետք է ամեն տեսակ ջանք գործադրեր նորաստեղծ պետության հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար, բայց շուտով տեղի է ունենում հակառակ գործընթացը, այսինքն՝ երկկողմ հարաբերությունները բավականին բարդանում են և, ի վերջո, վերածվում թշնամական հարաբերությունների: Կարծում ենք՝ այս հարաբերությունների բարդացման գործում այդքան էլ էական չէին հայ դիվանագետների որդեգրած ջանքերը: Ամենայն հավանականությամբ, Կիլիկիայի հայկական թագավորության և Կարամանյան պետության հարաբերությունների բարդացման գործում գոյություն ուներ երկու կարևոր հանգամանք: Առաջինն այն էր, որ Կարամանյան պետությունն առաջացել էր Իկոնիայի սուլթանության կազմում և, բնական է, որ Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության միջև տարիներ շարունակ տեղի ունեցած պատերազմներում մասնակից են եղել նաև կարամանները և, բնականաբար, Քյոսեդաղի ճակատամարտից հետո հայ-մոնղոլական պայմանագիրը գրգռել էր ոչ միայն սելջուկներին, այլև թուրքմեն-կա-*

---

[14] К. Босворт. *Նշվ. աշխ., էջ 183–184:*

[15] Туркменское государство Гараманогуллары (Караманогуллары), http://turkmen-history.narod.ru/garamanogullary.html

*րամաններին: Երկրորդ կարևոր գործոնը, ըստ մեզ, այն էր, որ 1250 թ. Եգիպտոսում իշխանության եկած մամլուքները, որոնք կարճ ժամանակ անց դարձան հայերի ու մոնղոլական իշխանության թշնամիները, պետք է փնտրեին իրենց դաշնակիցներ և այդպիսին կարող էր լինել նաև Կարամանյան պետությունը, որը, արևմուտքից սահմանակից լինելով Կիլիկյան Հայաստանին, կարող էին հարկ եղած դեպքում անհանգստություն պատճառել Կիլիկիայի հայկական թագավորությանը: Եվ բնական է, որ այդ փաստը պետք է օգտագործեին Եգիպտոսի մամլուք տիրակալները: Թուրքմեն-կարամանների արշավանքների համար կարող էր առիթ ծառայել ուղղակի թալանը և եկամտաբեր հողեր ձեռք բերելու ձգտումը, իսկ Կիլիկյան Հայաստանը, ինչպես հայտնի է, հռչակված էր իր հարուստ հողերով:*

*Միջնադարյան աղբյուրների տվյալներից իմանում ենք, որ առաջին շփումները երկու պետությունների միջև տեղի են ունեցել մոտավորապես Հեթում Ա արքայի կառավարման ժամանակաշրջանում, իսկ ավելի կոնկրետ՝ XIII դարի 50-ական թվականների վերջերին կամ էլ նույն դարի 60-ական թվականների սկզբներին: Ընդհանրապես, թուրքմեն-կարամանների պետությունը բավականին ուժեղացավ և ընդարձակեց իր պետության սահմաններն այն ժամանակ, երբ իշխանության գլուխ բազմեց Մուհամմեդ Ա-ն (1261–1278):*

*Վերադառնալով քննարկվող խնդրին՝ ասենք, որ նշյալ պետության ստեղծումից մի քանի տարի անց ընդհարումներ տեղի ունեցան Կիլիկյան Հայաստանի և Կարամանյան պետության միջև: Այստեղ հարց է ծագում, թե ի՞նչն էր պատճառը, որ թուրքմեն-կարամանները արշավեցին Կիլիկյան Հայաստանի բերդերի վրա: Այդ հարցի մասին մի շարք հետազոտողներ կարծիքներ են հայտնել: Այսպես, ըստ հետազոտող Ջ. Համմերի՝ Իկոնիայի սուլթանը, չկարողանալով հանդուրժել թուրքմեն կարամանների կողոպտչական արշավանքները և գործունեությունը, նրանց տվեց Էրմենեկ գյուղը[16]: Եվ հրոսակները, չկարողանալով Իկոնիայի վրա արշավել, իրենց արշավանքների ուղղությունը փոխեցին, շրջվեցին դեպի հայկական հողերը[17]: Կարծում ենք, որ Համմերի առաջ քաշած տեսակետն ամբողջովին տեղավորվում է տրամաբանության մեջ և այն ճշգրիտ է: Սկզբնական շրջանում հայերը երկու պարտություն կրեցին, որին հետևեց կարամանների հարձակումը Մանիոն բերդի վրա[18]: Ճիշտ է, այս անցուդարձերի մասին հայկական սկզբնաղբյուրները որոշակի տեղեկություններ հաղորդում են, սակայն արշավանքների սկսման և պայմանագրերի կնքման մասին լռում են: Այսպես, պատմիչ Հեթում Կոռիկոսցու վկայությամբ՝ հայոց արքան 1262 թ. օգնության է հասել Մանիոն բերդին և, ամեն այն հավանականությամբ, այն ազատել թշնամուց. «Հեթում թագա-*

---

[16] J. DE Hammer. *Նշվ. աշխ., էջ 85:*

[17] *Նույն տեղում:*

[18] *Կ. Կաենը Մանիոնի բերդն տեղադրում է Կալիկադնոսի հյուսիսային վտակի մոտ՝ Լարանդայից արևմուտք (տե՛ս Կ. Մ ո ւ թ ա ֆ յ ա ն. Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2007, էջ 429–430, Գ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2001, էջ 430):*

*ւորն Հայոց գնաց ի Մանիաւն և վերոյց զստարն և հացեց զբերդն…»*[19]*: Ուշադիր կարդալով պատմիչի տեղեկությունը՝ նկատելի է դառնում, որ նրա մոտ մի անհասկանալի բառ կա՝ կապված «հացեց» բառի իմաստի հետ: Ամենայն հավանականությամբ, այն ունի «նվաճել» կամ «տիրել» իմաստը: Փաստորեն, Հեթում Կոռիկոսցին նշում է, թե երբ է հայոց արքան օգնության հասել Մանիոն բերդին և պարտության մատնել թշնամուն, սակայն չի նշում, թե երբ է սկսվել թուրքմեն-կարամանների արշավանքը: Այս խնդրին անդրադարձել են նաև միջնադարի ճանաչված պատմիչ Սմբատ Սպարապետը և Վասիլ մարաջախտը, սակայն նրանք նույնպես խոսում են երկկողմ բախումների մասին*[20]*, չեն նշում թշնամու բանակի հարձակման սկիզբը: Յավոք, միջնադարյան մյուս աղբյուրագիտական երկերում Մանիոն բերդի պաշարման և, ընդհանրապես, նշված ժամանակաշրջանում Կիլիկիայի ու կարամանների հարաբերությունների մասին տեղեկությունները բացակայում են:*

*Այժմ տեսնենք, թե ինչ հետազոտություններ կան ուսումնասիրվող խնդրի շուրջ: Այսպես, առաջին հետազոտողներից մեկը, որը մի փոքր անդրադարձել է այս խնդրին, Ղ. Ալիշանն է: Վերջինս Մանիոնի պաշարման թվականը համարում է 1259-ը, իսկ հայկական զորքերի կողմից Մանիոն բերդի գրավումը 1262 թ.*[21]*: Հայտնի հայագետի կարծիքն ընդունում է նաև խաչակրաց արշավանքների ճանաչված հետազոտող Մ. Սեթոնը*[22]*: Բայց պետք է ասել, որ թե՛ Ալիշանը, թե՛ Մ. Սեթոնը չեն հիմնավորում իրենց առաջ քաշած տեսակետը, ոչ էլ ցույց են տալիս այն աղբյուրը, որից օգտվել են: Բացի այդ, կան մի շարք հետազոտողներ էլ, որոնք, հավանաբար, գիտակցելով խնդրի բարդությունը, ընդհանրապես ձեռնպահ են մնացել որևէ տեսակետ արտահայտելուց և միայն բավարարվել են նշելով, թե թուրքմեն-կարամանների զորքերն արշավել են Կիլիկիայի հայկական թագավորության տարածքի վրա, ավերածություններ գործել, գրավել Մանիոն բերդը և որոշ ժամանակ անց հեռացել*[23]*: Ինչպես նկատում ենք, հետազոտողները ոչինչ հստակ չեն նշում տվյալ խնդրի վերաբերյալ: Հետազոտվող խնդրին, միգուցե, կարող է որոշակի օգնության գալ Սմբատ Սպարապետի աշխատության մի այլ հատվածը, որտեղ գրում է, որ բերդի պաշարումը տևել է շուրջ 9 ամիս և որի պարտությունից մի քանի օր անց Կարամանը մահացել է. «Եւ եկեալ Խարամանն ի վերայ նոյն բերդին և պատեաց զնա շուրջանակի զամիս թև նեղէր սաստկապէս...»*[24]*: Նախ, կարծում ենք, որ, ամենայն հավանականությամբ, մեր պատմիչների մոտ ինչ-որ խառնաշփոթ կա՝ կապված տարեթվի հետ: Այսինքն՝ նկատում ենք, որ, ըստ*

---

[19] *Մանր ժամանակագրություններ 13–18-րդ դարերի, հ. Բ, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 71:*

[20] *Սմբատ Սպարապետ. նշվ. աշխ., էջ 238–239, Ա. Մաթևոսյան. Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ մարաջախտի ժամանակագրությունները.– ՊԲՀ, 1963, -4, էջ 190:*

[21] *Ղ. Ալիշան. նշվ աշխ., էջ 294:*

[22] A History of the Crusades, General editor M. Setton, vol. 2. London, 1969, p. 653.

[23] *Կ. Մութաֆյան. նշվ. աշխ., էջ 429–430, Գ. Միքայելյան. Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 329–330, Ա. Գալստյան. Սմբատ Սպարապետ, Երևան, 1961, էջ 34–35:*

[24] *Սմբատ Սպարապետ. նշվ. աշխ., էջ 238–239:*

*հայ հեղինակների*[25]*, նրանց պարտությունը տեղի է ունեցել 1262 թ., որին մասնակցել է նաև Կարամանը: Բայց անժխտելի է նաև այն փաստը, որ 1261 թ. Կարամանյան պետության մեջ տեղի է ունեցել դեկավարի փոփոխություն, որի մասին վկայում են մի շարք հետազոտողներ*[26]*: Եվ այստեղ շատ օգտակար է դառնում Սմբատի հաղորդումը, ըստ որի՝ բերդի պաշարումը տևել է 9 ամիս: Դրանից կարելի է եզրակացնել, որ եթե կարամանյան նոր տիրակալ Մուհամմեդ Ա-ն իշխանության է եկել 1261 թվականին, ապա դեպի Մանիոն բերդը թուրքմեն-կարամանների արշավանքը տեղի է ունեցել մոտավորապես 9–10 ամիս առաջ, այսինքն՝ 1260 թ.:*

*Այսպիսով, աղբյուրագիտական առկա տեղեկությունների և գիտական գրականության հիման վրա պարզեցինք, որ թուրքմեն-կարամանների արշավանքը Կիլիկյան Հայաստան տեղի է ունեցել 1260 թ., որից հետո՝ 1261 թվականին, հայկական զորքերին հաջողվել է ջախջախել թշնամուն և արտաքսել երկրի սահմաններից:*

*1263 թ. առաջին կեսն անցավ հարաբերական խաղաղության մեջ: Ըստ պատմիչ Սմբատ Սպարապետի՝ Կիլիկիայի հայոց արքա Հեթում Ա-ն բարեկամական այց կատարեց Անտիոք, իսկ հունիսին գնաց Հուլավու իշխանի մոտ: Ամենայն հավանականությամբ, Հեթում արքայի այցի նպատակներից մեկը կարող էր լինել նաև այն հանգամանքը, որ մոնղոլ իշխանը որոշակի քայլեր ձեռնարկեր ապագայում թուրքմեն-կարամանների կողմից Կիլիկյան Հայաստան արշավանքը կանխելու թագավորության արտաքին քաղաքականությամբ զբաղվող անձինք, մեր կարծիքով, շատ ճիշտ որոշում կատարեցին, քանի որ XIII դ. 60-ական թվականների սկզբներին մոնղոլական իշխանությունը դեռևս հզոր էր և, դիվանագիտական ճնշումներ գործադրելով, կարող էր կարգավորել Կիլիկյան Հայաստանի և Կարամանյան պետության միջև առաջացած խնդիրը: Եվ քանի որ լարված իրավիճակը Կիլիկյան Հայաստանում ձեռնտու չէր նաև մոնղոլներին, ուստի նրանք շուտով գործնական քայլերի դիմեցին խաղաղության հաստատման համար: Հուլավուն մոնղոլ դատավորների ուղեկցությամբ Հեթումին ուղարկեց Հերակլիա՝ Ռուքն ադ-դին Ղլիճ Արսլան Դ սուլթանի մոտ, և այնտեղ նրանք հաշտություն կնքեցին: Պատմիչ Սմբատ Սպարապետը այդ մասին գրում է. «Խանն Հուլայուն վասնզի յոյժսիրէր զթագաւորն, առաքեաց զկնի իւր իրաւադատ Մուղալք, Արդուչիք, որ եկեալք զկնի թագաւորին մինչեւ յԱռակլի, և եկն անդ սուլտանն Հռոմոց Ռուգնատինն և եղեն անդ աւուրս ինչ և եդին դաշինս սիրոյ երդմամբ, և արարին խաղաղութիւն»*[27]*: Հաշտեցնելով Հեթում արքային Ղլիճ Արսլան Դ սուլթանի հետ՝ մոնղոլները ցանկանում էին ապահովել առաջին հերթին Կիլիկյան Հայաստանի թիկունքը սելջուկների և թուրքմեն-կարամանների*

---

[25] *Մանր ժամանակագրություններ, հ. 2, Երևան, 1956, էջ 71, Հեթում Նղիրցու պատմությունը.– Լ. Տեր-Պետրոսյան. Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 54:*

[26] К. Босворт. *Նշվ. աշխ., էջ 183, Վ. Բայբուրդյան. նշվ. աշխ., էջ 36, Ս. Տեր-Ներսիսյան. նշվ. աշխ., էջ 405,* Туркменское государство Гараманогуллары (Караманогуллары), http://turkmenhistory.narod./garamanogullary.html*:*

[27] *Սմբատ Սպարապետ. նշվ. աշխ., էջ 241:*

*հնարավոր հարձակումներից: Դրանից հետո հայկական թագավորությանն այլևս վտանգ չէր սպառնալու Իկոնիայի սելջուկյան սուլթանության կողմից, և հայոց արքան հնարավորություն էր ստանալու զբաղվել գլխավորապես Եգիպտոսի սուլթանության դեմ պայքարով:*

## ИЗ ИСТОРИИ ОТНОШЕНИЙ КИЛИКИЙСКОГО АРМЯНСКОГО ЦАРСТВА И КАРАМАНСКОГО ГОСУДАРСТВА
(Вторая половина XIII века)

АРАМ ОГАННЕСЯН

Резюме

В истории Киликийского армянского царства особое место занимает внешняя политика 2-й половины XIII века. В этот период армянскому царству, кроме султанатов и монголов, начинают угрожать и туркмен-караманы, которые основали свое государство в 1256 году. Начиная с конца 1250-го года происходит ряд столкновений между Киликийской Арменией и Караманским государством. Средневековые источники свидетельствуют, что армянское царство прилагало немало усилий для сохранения устойчивых границ. И в результате правильной политики, которую вели армянские дипломаты, в 1263 году удается заключить мирный договор между Киликийским армянским царством и туркменским государством Караманидов, по которому временно устанавливается мир.

## FROM THE HISTORY OF THE RELATIONSHIPS BETWEEN THE KINGDOM OF CILICIAN ARMENIA AND KARAMANIAN STATE
(The second half of the 13th century)

ARAM HOVHANNISYAN

Summary

The history of external affairs in the second half of the 18th century constitutes the central part in the history of the Cilician Kingdom. During that period of time apart from the threats by the Egyptian Sultanate and the Mongols there appeared another state of Turkmen-Karamans in 1256 that started to threaten the Armenian Kingdom. The evidences from the medieval sources testify to the fact that the Armenian Kingdom was putting a lot of effort on keeping the boundaries safe. Due to the precise policy led by the diplomats of the Kingdom there was signed an agreement in 1263 which temporarily established peace in the Kingdom.